AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102-45/Լ
Դաս: ՀՊ
«28» հոկտեմբերի 2026թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21^{6}-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի «բ» ենթակետը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2026 թվականի նոյեմբերի 16-ին ժամը 11:00-ին ք.Երևան, Պարոնյան 21/1 հասցեում գտնվող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ «Զարգացում» մասնաճյուղում հրավիրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 2026 թվականի հոկտեմբերի 28-ը:
3. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 1-ի:
4. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը՝ համաձայն Հավելված 2-ի:
5. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով՝ համաձայն Հավելված 3-ի:
6. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տեղեկացնել, որ սույն որոշման 4-րդ կետով հաստատված ցանկում ընդգրկված նյութերին կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am):
7. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկի ձևը՝ համաձայն Հավելված 4-ի:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ • ARARATBANK OJSC • 02500518

AraratBank	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու մասին	Կոդ: ՈՐԽ0102-45/Լ Դաս: ԾԳ Ամսաթիվ: «28» հոկտեմբեր 2026թ.

Հավելված 1

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2026 թվականի նոյեմբերի 16-ին կայանալիք ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի

Հարց 1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամների վարձատրության սահմանաչափը հաստատելու մասին:

Հարց 2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու կապակցությամբ կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

Հավելված 2

Ց Ա Ն Կ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգ:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամների վարձատրության սահմանաչափի վերաբերյալ տեղեկատվություն:
3. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության նախագիծ:
4. Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկ:

AraratBank	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու մասին	Կոդ: ՈՐԽ0102-45/Լ Դաս: ԾԳ Ամսաթիվ: «28» հոկտեմբեր 2026թ.

Հավելված 3

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի մասին

Հարգելի բաժնետեր,

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը 2026 թվականի նոյեմբերի 16-ին ժամը 11:00-ին ք.Երևան, Պարոնյան 21/1 հասցեում գտնվող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ «Զարգացում» մասնաճյուղում հրավիրում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2026 թվականի հոկտեմբերի 28-ի դրությամբ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգը կցվում է սույն ծանուցմանը:

Ժողովում քննարկվող հարցերին վերաբերող նյութերին Դուք կարող եք ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85), ինչպես նաև համացանցի Բանկի պաշտոնական կայքէջում (www.araratbank.am)՝ սկսած 2026 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 16-ը:

Միաժամանակ սույն ծանուցմանը կից Ձեզ ենք ներկայացնում Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը:

Հարգանքով՝
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
վարչության նախագահ՝ Վախթանգ Աբրահամյան

Հավելված 4

Հաստատված է 28.10.2026թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի թիվ 45/Լ որոշմամբ

ՔՎԱԹԵՐԹԻԿ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության

բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85	16.11.2026թ.

Օրակարգի հարցերը	քվեարկության տարբերակները
	կողմ ☐ դեմ ☐ ձեռնպահ ☐
բաժնետիրոջ բաժնետոմսերի (ձայների) քանակը	բաժնետիրոջ /նրա ներկայացուցչի/ ազգանունը և անունը
_____	
	ստորագրությունը

Ծանոթություն. Հարգելի բաժնետեր, Ձեր ընտրության տարբերակի վանդակում նշագրեք «X»կամ «V», իսկ մյուս վանդակները թողեք դատարկ: Եթե բոլոր վանդակները թողնվեն դատարկ կամ «X» կամ «V» նշանը լրացվի մեկից ավել վանդակներում, ապա քվեարկությունը այս քվեաթերթիկով կհամարվի անվավեր: Հիշեցվում է նաև, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի քվեարկողի կողմից: